600.0036.11.06.02

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունիսի 2002 թվականի № 36Ն
ք.Երևան

ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ (ՄԻՋԱՆԿՅԱԼ) ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ ջերմային էներգիայի բաշխման լիցենզիա ստացած ընկերությունները եռամսյակային արդյունքներով ֆինանսական հաշվետվություններ չեն ներկայացնում Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողով:
2. Փոքր հիդրոէլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ստացած անձանց համար եռամսյակային արդյունքներով ներկայացվող հաշվետվության ձև սահմանել Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովի 2000 թվականի մարտի 24-ի № 7 որոշմամբ հաստատված «Եկամուտների հաշվետվություն» 1-1 ձևը:
3. Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման լիցենզիա ստացած ընկերությունների համար եռամսյակային արդյունքներով ներկայացվող հաշվետվության ձև սահմանել Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովի 2000 թվականի մարտի 24-ի № 7 որոշմամբ հաստատված՝ «Տեղեկատվություն ձեռք բերված հիմնական միջոցների մասին» 1-3 ձևը և «Տեղեկատվություն կապիտալ ներդրումների մասին» 1-6 ձևը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
էներգետիկայի կարգավորող
հանձնաժողովի նախագահ՝ ***Վ.Մովսեսյան***

11 հունիսի 2002 թ.
Երևան